զափար տամ Քեզ, այստեղ առաջ եմ բերում 1914—1918 թուերի հարստահարութիւնների պատկերը.

1914—5 թուին ինքնիշխան խաները գիւղից տանում են 700 ոչխար և 500 գառ։
1916 » դրացի լօռերը հանդից տանում են 40 ոչխար։
1917 » » » գիւղից տանում են 500 թումանի արժողութեամբ ցորեն, ալիւր և շաքար։
1918 » » » գիւղից առնում են 100 թումանի։

Սրա վրայ աւելացնենք և հողատէրերի հարստահարութիւնները. նրանք իւրաքանչիւր տարի 100 թումանի ապօրինի հարկ են վերցնում։

Ահա այս պատճառներով գիւղացիների դրութիւնն այստեղ անտանելի է և ապրում են վերջին ծայր թշուառութեան մէջ։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղբատ	100
2	Չունևոր	100
3	Միջակ	150
4	Ունևոր	50
5	Հարուստ	10
	Ընդամենը	410

ԲԺԿԵՐՏ

—

Խունկից դէպի արևմուտք, մի ուղերորդ ֆարսախ հեռաւորութեամբ, մի բլրի վրայ փռուած է Բժկերտ գիւղը. դա բանաստեղծական դիրքով զուտ հայաբնակ, մի փոքրիկ գիւղ է 22 տնով և 150 բնակչով, որից 80-ը արական է և 70-ը իգական։ Գիւղի հիմք գցողները գաղթել են Փէրիայի հայաբնակ Խունկ գիւղից 70 տարի առաջ. նրանք պարապում են հողագործութեամբ և անասնապահութեամբ։ Խմելու ջուրն աղբիւրի է, որը բղխում է գիւղի հարաւային կողմը փռուած մի ձորից և տեղացիներին մատակարարում առատ ջուր։ Այստեղ տները կողք-կողքի են փռուած, մի և երկյարկանի են և շինուած են քարերով ծածկուած ցեխից։

Գիւղն ունի այժմ չորս կալուածատէր.—Սուլթան Հա-